ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

18.09.2013թ. ք. Իջևան

Նախագահ ՝ Կ.Բ. Այվազյան

Քարտուղար ՝ Ա.Ս.Հակոբյան

Ներկա էին խորհուրդի նախագահ Կ.Բ. Այվազյանը(նիստի նախագահողը), խորհրդի քարտուղար Ա. Հակոբյանը , ,,Գծանկար, գունանկար'' ամբիոնի վարիչ Ա. Միրզոյանը, ասիստենտներ Ս.Հովհաննիսյանը, դասախոս Ա. Խաչատրյանը, ,,Դեկորատիվ – կիրառական արվեստի'' ամբիոնի վարիչ Ռ. Բուղդարյանը , ասիստենտներ Ա. Չիբուխչյանը, Դ. Չիբուխչյանը, Ռ. Պողոսյանը , դասախոսներ Դ. Պողոսյանը եվԱ.Դիլբարյանը:

Նիստին հրավիրված էր մասնաճյուղի , կրթության որակի ապահովման բաժնի մասնագետ , դասախոս Վ. Աղաբաբյանը :

ՕՐԱԿԱՐԳ

1.Ֆակուլտետում մասնագիտական խմբերի ստեղծում:

/զեկ.Կ.Բ. Այվազյան/

2.Շարունակական ուսումնառության համակարգի ներդնում՝ սոց.պատվերին համապատասխան:

/զեկ.Կ.Բ. Այվազյան/

<u>ԼՍԵՑԻՆ</u> – Ֆակուլտետի խորհուրդի նախագահի զեկուցումը օրակարգի առաջին հարցի վերաբերյալ: Տեղեկացվեց, որ մասնագիտական խմբերի ստեղծման գործընթացում ունենք նորություններ և նոր մոտեցումներ: Եթե նախկինում <<Կոմպոզիցիա>> և <<Աշխատանք նյութի վրա>> առարկաների մասնագիտական խմբերը ստեղծվում էին տղաներ ,աղջիկներ առանձին սկզբունքով, ապա այժմ առաջին և երկրորդ կուրսերում տրոհումը մասնագիտական խմբերում կատարվում է այբբենական կարգով, այնպես ինչպես գծանկարչության և գունանկարչության դասերի համար խմբեր ձավորելիս: Նախկին մոտեցումը 2013-14ուստարում կգործի միայն ավարտական՝չորրորդ կուրսի համար: Առաջին և երկրորդ կուրսի ուսանողները հավասարաչափ կուսումնասիրեն <<Կոմպոզիցիա>> և <<Աշխատանք նյութի վրա>> առարկաները՝փայտի գեղ. մշակում, խեցեգործություն, տեքստիլ

մասնագիտացումների ուղղություններով: Ուսումնառության 5-րդ կիսամյակում ուսանողները կընտրեն նշված մասնագիտացումներից միայն մեկը՝ բնականաբար ուսումնառության արդյունքներից ելնելով: Մասնագիտական խմբերում ուսանողները կվերադասավորվեն և մինչև ուսումնառության ավարտը ուսանողը չի կարող փոխել իր մասնագիտական խումբը:

Խորհրդի նախագահը կարծիք հայտնեց, որ ցանկալի է ուսանողների հավասար թվով ընտրություն ունենալու դեպքը, որպեսզի մասնագիտական առարկաները դասավանդող դասախոսների ծանրաբեռնվածություններում բևեռացումներ ի հայտ չգան: Այդ բևեռացումներց խուսափելու նպատակով հարկավոր է , որ մեր դասախոսները ուսումնառության ընթացքում ուսանողներին կողմնորոշեն մասնագիտական ընտրության հարցերում ըստ կարողությունների: Ցանկալի է , որ խեցեգործության բնագավառում հաջողություններ գրանցած ուսանողը հետագայում ընդգրկվի տվյալ առարկայի մասնագիտական խմբում :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ -,,Գծանկար,գունանկար'' ամբիոնի վարիչ Ա.Միրզոյանը և ,,Դեկորատիվ–կիրառական արվեստի''ամբիոնի վարիչ Ռ.Բուղդարյանը : Նրանք նշեցին, որ որպեզսի չլինեն առանց ծանրաբեռնվածության դասախոսներ , հարկավոր է, որ դասախոսները հենց սկզբից ուշադիր լինեն և հայտնաբերեն իրենց դասավանդած առարկայի նկատմամբ հետաքրքրություն և մասնագիտական կարողություն դրսևորող ուսանողներին: Նրանց քաջարելեն, բացատրեն, որ հինգ կիսամյակ ստացած գնահատականների պարզ միջինով է որոշվելու մասնագիտական խմբերի ձևավորման հարցը:

<u>ՈՐՈՇԵՑԻՆ</u> – <<Կիրառական արվեստ>> մասնագիտության մասնագիտական վերջնական խմբերի ճիշտ ձևավորման նպատակով ուսումնառության հենց սկզբից վերահսկողության հարցերի պատասխանատվությունը հանձնարարել ամբիոնների վարիչներին և մասնագիտության ուսումնական խորհրդատուին:

Առաջին և երկրորդ կուրսերի ավարտին ըստ նախնական արդյունքների ամբիոնի վարիչները կազմեն մասնագիտական խմբերի նախնական տարբերակներ և ներկայացնեն ֆակուլտետի խորհրդի քննարկմանը:

<u>ԼՍԵՑԻՆ</u> – Ֆակուլտետի խորհուրդի նախագահի զեկուցումը օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ: Նշվեց, որ արդեն երկրորդ տարին է, որ ֆակուլտետում ներդրված է բակալավրիատից – մագիստրատուրա շարունակական ուսումնառության համակարգը: Չնայած ֆակուլտետը և մասնաճյուղի տնօրինությունը շատ ջանքեր թափեցին նշված համակարգի ներդրման նպատակով , սակայն համակարգի ներդրումը անշրջելի չէ: Առայժմ ֆակուլտետին չի հաջողվում նախկին և ներկայիս շրջանավարտների շրջանում ծավալել այնպիսի բացատրական աշխատանք , որպեսզի

մագիստրատուրայի ընդունելությունը կրի մրցույթային բնույթ և ֆակուլտետը հնարավորություն ունենա դիմորդների մեջ ընտրել լավագույններին: Ընդունելության առաջին տարում մագիստրատուրա են դիմել 10՝ երկրորդ տարում՝ 7 դիմորդ: Ընդունելության առաջին տարում ֆակուլտետը ունեցավ 10 մագիստր, որոնցից մեկը ուսումնառության առաջին տարում դիմումի համաձայն ազատվեց մագիստրատուրայից, իսկ երկրորդ տարում ունեցանք 4 մագիստր : Թվերը խոսում են այն մասին, որ մագիստրատուրական ուսուցման պահանջարկը հեռու է ֆակուլտետի պահանջներին բավարարելու մակարդակից: Հասկանալի է, որ մագիստրատուրան ֆակուլտետին բերում է լրացուցիչ դասախոսական ծանրաբեռնվածություն: Սակայն փոքրաթիվ ուսանողներով մագիստրատուրա ունենալ չենք կարող և մեկ մագիստրոսի ուսումնառության վրա մասնաճյուղի կողմից կատարվող ֆինանսական ծախսերը չեն արդարացվում: Դրանք են պատճառները , որ մասնաճյուղի տնօրինությունը կայացրել է որոշում 2014թվականին ,,Կիրառական արվեստ'' մասնագիտության մագիստրատուրայում ընդունելություն չկազմակերպել: Եթե դրան հաջորդող տարիներին մագիստրատուրայի համար ֆակուլտետը դիմորդներ չունենա, ապա կվտանգվի մագիստրատուրայի հետագա ճակատագիրը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հանձնարարել ֆակուլտետի դեկանին, ամբիոնների վարիչներին, գեղ.խորհրդի նախագահին, մասնագիտության ուսումնական խորհրդատուին , մագիստրատուրայում դասավանդող դասախոսներին ուսանողության մեջ հնարավորինս կարևորել մագիստրատուրայի դերն ու նշանակությունը, բացատրել ֆակուլտետում շարունակական կրթության համակարգ ունենալու առավելությունները: